

1121

ԱՍՏԻՃ. ԼՈՒՍ. ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ—ՍՈՑ. ԴԱՍ. ԳԼԽ. ՎԱՐՁ.

ԱՇԽ. Ա. ԱՍՏԻՃ. ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԲՆՈՒԹՅՈՒՆ և ԱՇԽԱՏԱՆՔ № 17

Խմբ. Մ. Զառաֆյանի յեղ Ա. Արարատյանի

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՄԵՔԵՆԱՆԵՐ ՅԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹ.

Յ Ե Ր Ե Վ ա Գ — 1927

1510

*Handwritten signature*

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 17 «ԲՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ» № 17

Խմբ. Մ. Զառափյանիչից Ս. Արարատյանի


31.3

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ

ՅԵՎ

ԳՈՐԾԻՔՆԵՐ

9276



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1927

Գրառեպիտակ 447 բ. հ. 653 Տիրած 6000

Պետերբուրգի յերկրորդ տպարան Յերեվանում—1383

## 1. ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՅԵՎ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու առաջին զինքը հասարակ փայտն  
եր: Փայտով եր նա կռվում վայրի գազանների  
դեմ, նրանով եր իր վորսն անում:


Փայտն ե չեղել և գյուղատնտեսական ա-  
ռաջին գործիքը: Մարդը դեռնոր եր սկսել յերկ-  
րագործությամբ պարապել: Նա դեռ կանոնավ ը  
գործիքներ չուներ: Նա բույսերը լավ մշակել  
իսկ չգիտեր: Յեվ իր սրածայր փայտով փոր-  
փրրում եր հողը, մի-մի հատիկ ձգում մեջը, հողով  
ծածկում և սպասում հունձին: Հնձում եր ձեռ-  
քով, կալսում նույնպես ձեռքով և քարով ծեծում:

Սակայն հետագայում այդ պարզ գործիքն  
սկսեց ձևափոխվել և կատարելագործվել:

Մետաղների գյուտից հետո այդ գործիքն  
արդեն կանոնավոր տեսք ստացավ: Յեվ լավ եր  
գործում, և՛ ուշ եր մաշվում:

Իսկ այժմ: Այժմ այնպիսի կատարելագործ-  
ված, բարդ և արագ գործող մեքենաներ կան,

վոր այդ նախնական գործիքների հետ համեմա-  
տած մի-մի հսկա յեն: Ներկա կալսող մեքենան  
կամ տրակտորը հնարավորութունն են տալիս մի



Նկ. 1. Նախամարդու գործիքները

ժամուսն աչնքան աշխատանք կատարել, վորքան  
չեցին կարող կատարել մի քանի տասնյակ վայ-  
րենիներ իրենց սրածայր փայտերով մի քանի  
շաբաթում:

Յեթե համեմատենք վայրենի մարդու և  
մեր ապրելու յեղանակը, կտեսնենք, վոր նա ա-  
նապահով, վողորմելի կյանք եր վարում և շա-  
րունակ պատահականութուններից եր կախված.  
մինչդեռ այժմ կյանքն ավելի ապահով է, բազ-

մակողմանի, հարուստ և պատահականություն-  
ներից ավելի անկախ: Յեւ սա հասկանալի չե,  
շնորհիվ կատարելագործված մեքենաների մարդն  
այժմ կարողանում է ավելի շատ հող և լավ մը-  
շակել ու մեծ արդյունք ստանալ:

Մեքենաները մեծ նշանակություն ունեն,  
գյուղատնտեսության համար: Նրանք ապահո-  
վում են գյուղացու բերքը:

Մեքենաները հնարավորություն են տալիս  
աշխատանքն արագ կատարելու և բերքն ազա-  
տելու կծղելուց, կարկտահարությունից, փը-  
տելուց:

Ի նկատի ունենալով նրանց անփոխարինելի  
դերը՝ խորհրդային իշխանությունն ամեն կերպ  
աշխատում է տարածել մեքենաները գյուղացիներ  
ի մեջ: Այդ պատճառով էլ նա բացում է վար-  
ձակայաններ, վարձակետեր, նորոգող արհեստա-  
նոցներ:

Վարձակայանը և վարձակետն այն տեղերն  
են, ուր գյուղացին եժան վարձով մեքենա յե  
ստանում իր հողի վրա գործածելու համար: Հա-  
տուկ մասնագետներ բացատրում են նրան թե  
ինչպես պիտի գործ ածի այդ մեքենան: Վար-  
ձակայանանին կից, կամ առանձին, գործում են  
նաև նորոգող արհեստանոցներ, ուր նորո-  
գում են փչացած գյուղատնտեսական մե-

քենաները: Վերջապես՝ մեքենաների ավելի  
լավ տարածելու համար կազմակերպում են շրջ-  
ջիկ գումազներ, վորևե մեքենա սալով գյուղե-  
գյուղ ման են ածում և նրանով գյուղացու աշ-  
խատանքները կատարում: Այսպես սրինակ սեր-  
մացու պատրաստելիս սերմագտիչ մեքենան  
շրջեցնում են և գյուղացիների սերմացուն  
արագ և լավ գտում:

Թե վարձակայանը և թե շրջիկ գումագր  
բացի գյուղացուն ոգնելուց, նրան վարժեցնում  
են այդ մեքենաների գործածությանը: Յեթե  
այնուհետև վարձակայանը փակվի յեւ մեծ վը-  
նաս չի լինի, վորովհետև գյուղացին արդեն մե-  
քենայի ոգուտը հասկացած կլինի և նման մեքե-  
նաներ ձեռք բերելու համար ամեն միջոցի կը  
դիմի:

Վերջին գործը հեշտացնելու համար կազ-  
մակերպում են մեքենա ոգտագործող և տրակ-  
տորային ընկերություններ:

## 2. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՈՐԾՈՒՄ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

Յեթե մի փոքր մտածենք մեքենայի գոր-  
ծելու շուրջը, կտեսնենք, վոր նա աշխատանքի  
մեջ վորոշ տեղ և գրավում: Աշխատելիս  
մենք վորոշ ուժ ենք գործ դնում. այդ ուժը

ստանում ենք ձիուց, յեզից, ջրի հասանքից, շո-  
գուց, տրակտորից կամ մեր մկաններից: Այդ  
ուժով մենք վորոշ գիմադրութիւն ենք հաղ-  
թում. հերկելիս մենք հողի շերտը կտրում և  
շուռ ենք տալիս, հնձելիս ամուր ցողունները  
կտրում ենք կամ փոցխելիս հողի ամուր կոշ-  
տերը ջարդում ենք: Վորքան հողի գիմադրու-  
թիւնը մեծ է կամ ցողուններն ամուր, այնքան  
եւ մեծ ուժ ենք գործադրում: Հայանի յե, վոր  
ամուր կավահողերն ավելի դժվար է հերկել  
քան փուխը ավազահողերը:

Սակայն վորքան եւ ուժեղ լինի մարդը կամ  
մեքենան, նա անմիջապէս հողի վրա ազդել չի  
կարող: Որինակ՝ ձեռքով վոչ մի դեպքում չեք  
կարող հողից շերտ կտրել է շուռ տալ. յեթե  
փորձեք՝ միայն ձեռքներդ կհանկուեք: Մինչդեռ  
նույն ձեռքով բայց բահի ոգնութիամբ այդ աշ-  
խատանքը կատարել դժվար չէ:


Մեքենայի մեջ բացի գործիքից, վոր գոր-  
ծող մասն է կազմում, այլ մասեր եւ կան:  
Որինակ՝ հնձող մեքենայի շարժիչ ուժը ձիուց  
ենք ստանում, գործիքը այն դանակներն են,  
վոր կտրում են ցողունները: Ուժի և գոր-  
ծիքի միջև մի քանի ատամնավոր անիվներ և  
այլ մասեր կան, վորոնք ուժը փոխադրում են  
գործիքի մոտ. այդ միջին մասերը միասին փո-

խաղրիչ մաս են կոչվում: Բարդ մեքենան կազմ-  
ված է լերկու մասից՝ գործիքից և փոխադրիչ  
մասից:

Պարզելու համար՝ թե ինչպես են գործում  
մեքենաները՝ պարզ որինակների դիմենք:

Ինչպես են բահով հողը փորում: Վերլու-  
ծենք այդ շարժումները: Նախ բահը վոտքով  
խրում են հողի մեջ, ապա կոթը դեպի յետ քա-  
շելով հողի կտորը պոկում և շուռ տալիս: Այս-  
տեղ նախ վոտքով խփում են, սա դարկ է:  
Բահի խոր մտնելուն ոգնում է նրա բերանի  
սուր լինելը, այն ուժը, վոր գործ էք դնում  
դարկի ժամանակ, բահի սուր բերանին է կու-  
տակվում և նրան խոր է տանում: Այստեղ դուք  
կարող եք նկատել, վոր յեթե բահը ժանգոտած  
է կամ կեղտոտ, նա այնքան խոր չի գնում, վոր-  
քան յերբ հղկված ու մաքուր է. այստեղ ել  
գործում է շփումը, վորը խանգարում է բահի  
խոր մտնելուն: Վերջապես, մեծ դեր է կատա-  
րում և բահի կոթը, վոր այս դեպքում իբր փո-  
խադրիչ մաս է հանդիսանում: Փորձը ցույց է  
տալիս, վոր կարճ կոթավոր բահով հողը փորելն  
ավելի դժվար է, քան յերկար կոթավոր բահով:  
Բահի կոթը լծակի դեր է կատարում: Վորքան  
կոթը կարճ բռնեք այնքան հողի փոքր կտոր կը  
պոկեք և ընդհակառակը՝ վորքան կոթը յերկար

բունեն այնքան հեշտությամբ ել մեծ կտոր հող  
կպուկեն: Ջարկի, սրվածքի, շփման և լծակի յե-




Նկ. 2. Հավասարաթև լծակ

րևույթներն աւորյա կյանքում դուք շատ կպա-  
տահեք (մկրատ, ունելի, մուրճ և այլն):

Վերցնենք մեկ ուրիշ գործիք՝ կացին: Ինչ-  
պես ե գործում նա: Նախորդի հիման վրա դուք  
խսկույն կասեք՝ այստեղ կան զարկի և սրվածքի  
յերևույթները: Ճիշտ ե, բայց այստեղ մի  
նոր յերևույթ ել կա: Մենք գիտենք, վոր  
յերբ փայտահատը կացնով չի կարողանում  
մեծ կոճղերը ճեղքել, նա սեպի ոգնությանն ե  
դիմում: Սեպը դնում ե փայտի ճեղքի մեջ և  
կացնի քյուլփով խփում սեպի լայն մասին: Նույն-

սլիսի մի սեպ եւ և ինքը կայիւնը: Ուրեմն կայի-  
 նը և՛ մուրճ ե, և՛ սրվածք և՛ սեպ:

Յեթե մեկ մեկ բոլոր մեքենաներն ել բըն-  
 նենք կտեսնենք, վոր բոլորն ել գործում են լը-  
 ծակի, սեպի, դարկի, սրվածքի, շփման որենք-



Նկ. 3. Անհավասարաթև լծակ

ներով: Բայց մեքենաների մեջ ավելանում են  
 նաև ժանյակավոր անիվները, վորոնք դարձյալ  
 լծակների նման են գործում: Յուրաքանչյուր  
 ժանյակավոր անիվ կարծես թե բաղմաթիվ լը-  
 ծակներից լինի կազմված՝ ամեն մի ժանյակը  
 մի լծակ:

Այստեղից պարզ ե, վոր վորքան մեր մեքե-  
 նաները մեծ լինեն, ամուր և չերկար լծակներ  
 և սուր բերան ունենան այնքան նրանք լավ կը  
 գործեն: Բացի այդ, վորքան նրանց մեջ շփումն

ուժեղ լինի, այնքան դժվար կշարժվեն և մեծ ուժ կպահանջեն: Այդ պատճառով ել մեքենաները միշտ մաքուր, հղկված են պահում և հաճախ յուղում են, վոր շտանգոտեն: Յուղից շիտումն ել թուլանում ե:

### 3. ՀԵՐԿԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հերկի գործիքներն են արորը և գուլթանը: Արորը կազմված ե միակտուր փայտե հիմքից և յերկաթե խոփից: Խոփը գործում ե սեպի նման: Նրա բերանը սուր ե, իսկ յետևի մասը ավելի բարձր: Արորը հողի շերտը տեղից բարձրացնում և փշրում ե, բայց շերտը շուռ չի տալիս:



Նկ. 4. Արոր

Այդպես չե գուլթանը: Նրա դերը հենց նրանումն ե կայանում, վոր հողի շերտը շրջի: Գուլթանի կմախքը կազմված ե դեկից և հենարանից:


Հենարանի վրա ամրացած են ցածուկ խո-  
փը, իսկ կողքին թևը: Ղեկի վրա հենարանի  
առջևը թեք դիրքով ամրացած է դանակը, առ-  
ջևի ծայրին մի ողակ, իսկ հենարանի յետևը՝  
մաճը:

Սոփը հողի շերտը կտրուկ է տակից և հո-  
րիզոնական ուղղությամբ: Դանակը նույնպես  
կտրուկ է բաց ուղղաձիգ գծով: Ստացվում է  
մի շերտ: Այս կտրած շերտը թևի գոգավոր  
մակերեսի վրայով բարձրանում և շրջվում է:

Հենարանը կայունութուն է տալիս գու-  
թանին: Մաճի շնորհիվ հերկողն ուղղում է գու-  
թանի աշխատանքը՝ դնելով նրան հողի մեջ խոր  
կամ լերեսին մոտ: Յերբ մաճը բարձրացնում են,  
խոփը խրվում է հողի մեջ և ավելի հաստ շերտ  
է կտրում. իսկ յերբ մաճն իջեցնում են, խոփը  
բարձրանում է վեր և բարակ շերտ է վերցնում:  
Առջևի ծայրի ողակից կապում են ձիու կամ յե-  
զի շղթան:

Նայած թևի կազմության և խոփի լայնու-  
թյան գութանը հողի շերտը բոլորովին շուռ է  
տալիս կամ թեք իրար վրա հենում է կամ կող-  
քի յե պռկեցնում: Յերբեմն ել յերբ թևը շատ  
է դիք դրված, նա շերտը չի շրջում այլ փըշ-  
րում է:

Բացի սովորական մի խափավոր գուլթան-  
ներից կան և բազմախոփ գուլթաններ:  
Ինչպես տեսաք, գուլթանի մեջ հանդես են




Նկ. 5. Գուլթան

գալիս թե սեպի և թե լծակի յերևույթները:  
Խոփը և դանակը իբր սեպեր են գործում:  
Մաճն ու դեկը իբր լծակներ են գործում:

#### 4. ՀՈՂԸ ՓԽՐԱՑՆՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Հերկը հիմնավոր գործողությունն է և տար-  
վա ընթացքում հաճախ չի կատարվում: Այդպես  
չե փխրացումը: Սա մի գործողությունն է, վոր  
հաճախ է կատարվում նույնիսկ բույսի աճման  
ընթացքում: Փխրացող գործիքներով են կատարում  
քաղհանը և հողի չերեսին կապած կեղևի փշրելը:  
Փխրացնող գործիքներ են փոցխերը և կուլ-  
տիվատորները:

Փոցխերի շատ տեսակները կան: Նրանց հիմնական կառուցվածքն է՝ շրջանակ, վրան ցրցվածքներ ամրացրած: Յերբեմն այդ ցրցվածքները զսպանակավոր են լինում, վոր քարին առնելիս չկոտրվեն: Կան և սկավառակավոր փոցխեր: Փոցխի գործելու մեջ հիմնական տեղը բռնում է զարկը: Այդ պատճառով էլ այդ գործիքները հողը փշրում, փոշի դարձնում և փշացնում են: Ամենից տարածվածը «Զիգզագ» փոցխն է:




Նկ. 6. Զիգզագ փոցխ

Նույն աշխատանքը մի փոքր այլ ձևով կատարում են կուլտիվատորները, վորոնք սակայն փոցխերի նման հողը շատ չեն փոշիացնում:

Կուլտիվատորի հիմնական կազմն է՝ շրջանակ՝ վրան փոքր թաթանման խոփիկներ ամրացրած: Այս խոփիկները՝ սեպի նման գործելով հողը փշրում են, բայց շատ չեն փոշիացնում:

Նայած թե ինչպիսի հողերի հետ գործ ունենա, դրա համեմատ ել կուլտիվատոր են ընտրում ծանր, միջակ կամ թեթև:

Սրանց նման ե սակայն մեծ տանիքաձև թաթով բուկ լցնողը, վոր գործ են անում գլխավորապես կարտոֆիլի բուկ լեցնելու համար:



Նկ 7. Բուկ լեցնող

Կուլտիվատորներով քաղհան կամ փխրացում կատարում են և բույսի անձրևի ժամանակ: Սակայն այս դեպքում ցանքսը պետք ե շարքերով լինի արած, այլապես կուլտիվատորով աշխատել չի կարելի: Յեթե ցանքսը շարքով ե կատարած, ապա շնորհիվ կուլտիվատորների քաղհանի, փխրացման և բուկը լեցնելու հետագա աշխատանքները մաքուր, արագ, հեշտ և աժան են կատարվում:


## 5. ՇԱՐՔԱՅԱՆ ՄԵՔԵՆԱ

Շարքերով ցանելը խոշոր առավելու թյուն:

նեն ունի: Բացի այն՝ վոր հետագայում հնարա-  
վոր ե լինում հողը փխրացնել, քաղհանել կամ  
բույսերի բուկ լեցնել, շարքացանն այն առավե-  
լությունն ունի, վոր այդ դեպքում սերմ քիչ ե  
ծախսվում և բույսերը համաչափ դասավորվե-  
լով լավ են զարգանում:

Մի քանի տեսակ շարքացան մեքենաներ կան՝  
հատիկների, բամբակի և այլ բույսերի համար:

Հատիկների շարքացան մեքենան հետևյալ  
կազմությունն ունի: Նա ունի մի չերկար արկղ,  
վոր հատիկի պահեստն ե: Այդ արկղի ցածի  
մասում չերկար առանցքի վրա ժանյակավոր ա-



Նկ. 8. Շարքացան մեքենա

նիվներ են պտտում, վորոնք հատիկները մեկ  
մեկ թափում են: Անցքերի տակ զսպանակավոր  
խողովակներ են ամրացած: Խողովակների ծայ-

րերին կան փոքր խոփիկներ: Առանցքը պտտում  
ե մեքենայի անիվների հետ: Յերբ մեքենան  
շարժվում ե, անվի հետ դառնում ե և առանցքը:  
Ժանյակավոր անիվները հատիկը բաց են թող-  
նում խողովակի մեջ: Խողովակի միջով հատիկն  
ընկնում ե խոփիկի քաշած ակոսի մեջ, վորը  
խոփիկի յետևից ինքն իրեն հողով ծածկվում ե:


Ըստ ցանկության կարելի յե այնպես կա-  
նոնավորել, վոր շարքերը մոտ կամ հեռու լինեն  
կամ թե չե սերմը շարքերում խիտ կամ նոսր  
դասավորվի:

Շարքացան մեքենան լավ տնտեսություն-  
ների մեջ անփոխարինելի յե և ով մի անգամ  
ոգտվում ե այդ մեքենայով այլևս չի ցանկանում  
շաղացան անել:


## 6. ՀՆՁՈՂ ՄԵՖԵՆԱ

Հնձող մեքենան ևս լավ տնտեսության համար  
անհրաժեշտ ե: Նրա գործող մասը կազմված ե չեր-  
կաթյա չերկու շերտերից, վորոնցից տակինի վրա  
մեծ և տափակ ատամներ են ամրացրած, իսկ վե-  
րինի վրա՝ նույն ձևի սուր դանակներ: Յերբ մե-  
քենան առաջ ե շարժվում, նրա ժանեկավոր շար-  
ժումն անիվներով փոխադրվում ե դանակներ  
կրող վերին շերտին և սա ցած շերտի վրա յետ

A I  
4276



ու առաջ ե շարժվում: Խոտը կամ ցորենի  
ցողուններն ընկնում են ատամների արանքը և  
կտրվում են:



Նկ. 9. Հնձող մեքենա

Հնձող մեքենայի աշխատանքը պարզ  
պատկերացնելու համար հիշեք գլուխ խու-  
զող մեքենայի կազմութիւնը և գործելը:  
Ճիշտ այդպես ե աշխատում և հնձող մեքենայի  
գործող մասը:

Կտրտած ցողունները թափվում են դանա-  
կի յետևում տեղավորված տախտակի վրա, իսկ  
այդտեղից ել ցած կամ մեքենայի հատուկ մա-  
սը: Տախտակի վրայով ցողուններ քաշելը կա-

տարվում ե հասուկ թևերով, վորոնք նույնպես  
մեքենայի անվի հետ են պտտվում:

Կան և այնպիսի հնձող մեքենաներ, վորոնք  
իրենք ել հենց խուրձեր են անում:

Հնձող մեքենաները կարող են աշխատել  
միայն հարթ և ուղիղ տեղերում:

Յեթե մենք համեմատենք հնձող մեքենայի  
և մանգաղով հնձողների աշխատանքը, կտեսնենք  
թե ինչպես մեր հնձվորը մեջքը ծուռ, դեմքն  
ու մարմինը քրտնաթոր ամբողջ որերով մի ինչ  
վոր յերկու դեպքատին վողորմելի հողամաս ե  
հնձում: Մինչդեռ հնձող մեքենա բանեցնող  
աշխատավորը շիփ-շիտակ նստած միայն դեկա-  
վարում ե ձիու ընթացքը և մեքենայի գործը-  
սև աշխատանքն այստեղ մեքենան ե կատարում:  
Այստեղ ավելի քան այլ տեղ կարելի չե ասել,  
վոր մեքենան մարդուն մարդ և բնության  
իշխող ե դարձնում, այնինչ առանց լավ մեքե-  
նայի մարդը միայն չարքաշ բեռնակիր ե: Ել  
չասենք, վոր հնձող մեքենան մանգաղով աշխա-  
տողից արագ ե հնձում:

## 7. ԿԱԼՍՈՂ ՄԵՔԵՆԱ

Այն, ինչ վոր վերևում ասացինք հնձողի  
մասին, նույնը և դեռ ավելացրած կարող ենք  
ասել կալսող մեքենայի մասին: Պատկերացրեք


ամառվա տոթերին կալը, կամը, յեղները, անվերջ  
պտուտներն արևի տակ: Հապա հանկարծ վոր  
անձրևն ել յեկավ: Վայրի վերո ամեն ինչ հա-  
վաքում և տուն են փախչում: Աշխատանքը  
մնում է, իսկ գյուղացին բնության յերևույթի  
ձեռքին գերի՝ ձեռքը ծոցում սպասում է թե  
անձրևը յերբ պիտի կտրվի: Կամ թե չե կալը  
լավ է գնում, բայց արի ու տես, վոր յերեկո-  
յան քամի չի անում, վոր հատիկը դարմանից  
գատեն:

Այդպես չե կալսող մեքենան: Նա շատ  
ավելի արագ է կալսում քան գյուղացու կամը,  
անձրևից չի վախում, քամու չել չի սպասում  
ե իր գործը կարկուտի ժամանակ ել է անում  
սուանց քամու չել:

Բացի այդ՝ նա գյուղացուն հնարավորու-  
թյուն է տալիս կալը հետաձգելու և ավելի ան-  
հրաժեշտ աշխատանք կատարելու: Գյուղացուն  
խրատում են, թե հենց վոր արող հնձես, իսկույն  
հողը վարի ու փոցխի, վոր մյուս տարի շատ բերք  
ստանաս: Դե արի ու հերկի, կամ փոցխի: Կալը  
կմնա, վատ որերը կհասնեն, և ել վոչ արև կլինի  
վոչ կալ: Գյուղացուն այդ նեղ վիճակից ազատողը  
կալսող մեքենան է: Հավաքիր դեզդ ծածկի տակ,  
գնա գործիդ, վարն արա, վերջացրու հետո  
արի, վոչ անձրևի նայիր, վոչ արևի, սուս փուս

քս կալն արա, մաքուր ցորենն ու ջարդած  
դարմանը ստացիր:

Ասենք լեթե կալսող մեքենան լինի, իսկի  
կարիք ել չի լինի կալը հետաձգել, այնքան հա  
արագ ե կալսում:



Նկ. 10. կալսող մեքենա


կալսող մեքենայի գործող մասերը հատուկ  
գլաններն են վորոնք հասկերը ջարդում են:  
Ջարդած հասկերը ցածում մաղերի և քամհարի  
շնորհիվ մասերի յեն բաժանվում: Հատիկը մի  
տեղից ե գուրս գալիս, ծղնոտն ու թեփն ել  
այլ տեղից:

կալսող մեքենան աշխատեցնում են շոգե-  
մեքենայով կամ տրակտորով:

կալսող մեքենան բավական մեծ ե և թանկ:  
Գնելու համար ամբողջ գյուղով կազմակերպվում  
են, միասին ձեռք բերում, միասին ել ոգտագոր-  
ծում:

## 8. ՍԵՐՄԱԶՏԻՉ

Թե փոքրան մեծ նշանակութիւն ունի մաքուր սերմացու ցանելը, այդ գյուղացուց հարցրեք: Յեվ իզուր չե, փոքր ձմեռվա յերկար գիշերները տնով տեղով մեծ ու փոքր նստած ցորեն են գտում, գյուլուլն ու գժուկը, կուտն ու քարը ջոկում:



Նկ. 11. Սերմազտիչ

Այդ նույն աշխատանքն ավելի արագ կատարում ե սերմազտիչ մեքենան: Բազմատեսակ սերմազտիչ և սերմը տեսակավորող մեքենաներ կան: Նրանք սերմն ընտրում են ըստ մեծության, ըստ քաշի, ըստ ձևի:

Ըստ մեծության ջոկում են մաղերով:

Ըստ քաշի չել քամու ոգնությամբ են ընտ-  
րուած: Մեքենայի մեջ վերեւից շատ դանդաղ,  
հատիկները ցած են թափւում, իսկ կողքից ու-  
ժեղ քամհարում են: Քամու ուժից հատիկները  
թեքվում են՝ թեթևները հեռու են ընկնում, ծան-  
րերը՝ մոտ: Ծանրերը հավաքվում են սերմացու,  
իսկ թեթևները գործ են ածում:

Հատիկն ըստ ձևի ընտրելու համար գործ են  
ածում «Տրիյեր»: Նրա հիմնական մասը պտտվող  
գլանն է: Գլանի սկզբի մասը մաղ է, իսկ ավելի  
ցած միապաղաղ է և ներսից փոսիկներով: Յերբ  
վոր գլանը շարժվում է, կլոր ձևի հատիկները,  
գլուկուկը և կուտն ընկնում են փոսիկների մեջ  
և նրանց մեջ վեր բարձրանում:

Յեթե առողջ հատիկներն ընկնեն, նրանք  
շատ վեր չեն բարձրանա, առջևը մի թիթեղ կա,  
վոր նրանց կաշում է և ցած է գցում: Իսկ կլոր  
հատիկներն ազատ անցնում են թիթեղի տակով  
և ընկնում են հատուկ կիսախողովակի մեջ, վոր  
ամրացած է գլանի մեջ:

Ինչու կլոր սերմերը ժամանակից շուտ չեն  
թափվում: Այդ հասկանալու համար այդպիսի մի  
փորձ արեք: Պահածույի մի փոքր աման վերցրեք,  
յերեք չորս տեղ անցք արեք, յերկաթաթելով  
դուլի նման կապեք և թելից կախեք: Ապա մեջը ջուր  
ածեք և պտտցրեք: Զուրը չի թափվում, շարժման

ժամանակ կենտրոնախույս ուժ առաջ ե գալիս  
վորը պահում ե ջուրն ամանի մեջ: Ճիշտ նույն  
ուժն ե, վոր չի թույլ տալիս կլոր հատիկներին  
ժամանակից շուտ ընկնել: Յեթե շատ արագ շար-  
ժենք, կլոր սերմերն չերբեք ել չեն ընկնի: Այդ  
ե պատճառը, վոր վոչ շատ դանդաղ և վոչ ել  
շատ արագ պտտել չի կարելի, պետք ե պտույ-  
տի արագությունն այնպես հարմարեցնել, վոր  
սերմերը բարձրանան և ընկնեն կիսախողովակի  
մեջ:

Հատիկից խոշոր և մանր մասերը մաքր-  
վում են գործիքի սկզբում: Յերբ հատիկն ըն-  
դունիչից թափվում ե տակի մաղի վրա, հատիկ-  
ները և նրանցից մանր մասերը մաղի միջով իջնում  
են ցած, իսկ ավելի խոշոր մասերը և թեփը  
վրայով մի կողմ են թափվում:

Այնուհետև գլանի սկզբում, նրա արանք-  
ներով թափվում են շատ մանր մասերը: Մնում  
ե հատիկը, կուտը և հատիկի չափ բայց կլոր  
մասերը, վորոնք գատվում են գլանի ցածր  
մասում, ինչպես վերևում նկարագրեցինք:

«Տրիյերի» ծայրից մի խողովակով գտած  
հատիկն ե դուրս գալիս, մի այլ խողովակով  
մնացած մասերը:

Ուրեմն, ինչպես տեսանք, «Տրիյեր»-ը սերմը

դառում և թե հասիկից խոշոր, թե մանր և թե իր  
չափի բայց այլ ձևի մասերից:

## 9. ԱՅԼ ՄԵՔԵՆԱՆԵՐ ՅԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Գյուղատնտեսութեան մեջ գործ են ածուած  
և այլ մեքենաներ ու գործիքներ՝ տափան, ար-  
մատահատ, ծղնոտահատ, ակոսարար, մարկոս:  
Գործ են ածում և ձեռքի գործիքներ, վորոնց  
գուք ծանոթ եք՝ բահ, թոխի կամ ուրաղ, ձեռքի  
փոցիկ, չերկմատանի և այլն:

Տափանով հողի յերեսը մի փոքր ամրացնում  
են, վոր սերմերը լավ ծլեն: Տափանները լինում  
են գլանաձև և տափակ:

Ակոսարարը գործ են ածում բամբակի և  
այլ շարքահեռ բույսեր ցանելու և տնկելու ժա-  
մանակ: Նշա ոգնութեամբ հողի յերեսին գուգա-  
հեռ ակոսներ են քաշում:


Մարկոսով ջրովի հողերի վրա թմբեր են  
պատրաստում և մարգեր կապում:

Արմատահատով կենդանիներին տալիք ար-  
մատապտուղները՝ բազուկը, գազարը կամ շաղ-  
գամը մանրացնում են:

Ծղնոտահատով ել ծղնոտը մանրացնում,  
հարդ կամ դարման են դարձնում՝ կենդանիե-  
րին տալու կամ այլ պետքերի համար:

Իսկով հողը փորում կամ ջուր են կապում:  
Առհասարակ բահը մեր գյուղացու ամենասովորա-  
կան գործիքն է:

Թոխին կամ ուրագը գործ են անում հողը  
փխրացնելու, կոշտերը մանրելու, քաղհանի, կե-  
ղևը քանդելու, բուկը տալու համար: Սա հուլյն-



Նկ. 12. Թոխի

պես ձեռքի կարևոր գործիքներից է: Սա գոր-  
ծում է զարկով:

Ձեռքի փոցխը գործ են անում շիթիւթ  
մարգերը կամ բանջարանոցը հարթելու, խոտերի  
արմատները ցելից հանելու համար:

Ձեռքի այս յերեք գործիքները բանջարա-  
նոցի ամենակարևոր գործիքներն են: Առանց այդ  
գործիքների բանջարանոցների աշխատանքները  
կանոնավոր տանել չի կարելի:

## 10. ՏՐԱԿՏՈՐ


Մեր գյուղական գործիքներն ու մեքենաները ձեռքով կամ յեղներով են գործի դնում:

Սակայն դա այնքան էլ ձեռնաու չէ, մասնավանդ յեթե տնտեսության մեջ բավարար քանակով կերեր չունեն և պետք է դրսից գնել: Այլելի աժան է նստում տրակտորը:

Տրակտորն այլելի արագ է աշխատում քան չեզը, ամենորչա կեր և խնամք չի պահանջում: Միայն պետք է մոտը լավ մասնագետ լինի, վոր չփչացնեն կամ անխնամ չմնա ու չժանգոտի:

Տրակտորն աշխատում է բենզինով: Նրան կարելի չէ գործածել իբր չեզ, և դուրսնի կամ այլ գործիքի լծել: Կարելի չէ նաև կառքի լծել՝ խոտ կամ փայտ տեղափոխելու համար: Տրակտորը գործ են անում նաև իբրև շարքիչ ուժ զանազան մեքենաներ աշխատացնելու համար: Վերջապես տրակտորը կարելի չէ նաև գործածել ելեքարականութուն ստանալու համար:

Տրակտորի կազմութունը բավական բարդ է: Նրա մեջ բենզինը գազ է դառնում, փոքր




Նկ. 13. Տրակար

պայթուեններ ե տալիս և այդպիսով շարժում ե  
միտցը, վորն իր հերթին շարժում ե տրակտորի  
անիվը:

Թե տրակտորը և թե այլ կատարելագործ-  
ված մեքենաներն արդեն մեզ մոտ տարածվում  
են: Նրանց շնորհիվ մեր գյուղատնտեսութունը  
բարձրանում ե:

# Ց Ա Ն Կ

	ԵԶ
1. Գործիքների և մեքենաներ նշանակու- թյունը . . . . .	3
2. Ինչպես են գործում մեքենաները . . . . .	6
3. Հերկի գործիքներ . . . . .	11
4. Հողը փխրացնող գործիքներ . . . . .	13
5. Շարքացան մեքենա . . . . .	15
6. Հնձող մեքենա . . . . .	17
7. Կալսող մեքենա . . . . .	19
8. Սերմագտիչ . . . . .	22
9. Այլ մեքենաներ և գործիքներ . . . . .	25
10. Տրակտոր . . . . .	27



THE UNIVERSITY OF CHICAGO  
LIBRARY  
540 EAST 57TH STREET  
CHICAGO, ILL. 60637



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039213

0643

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ԿՈՒՅՆ ԳՐԱԴԱՐ

A I  
4276

- 1. Տերեվաթափ և աշնան գուլներ . . . 10 »
- 2. Կենդ. հարմարացուածը և ձմեռային  
բուեր . . . . . 10 »
- 3. Թռչունների շուն . . . . . 10 »
- 4. Պտուղներ և սերմեր . . . . . 10 »
- 5. Հող և նրա մշակուածը . . . . . 10 »
- 6. Բանջարանոց . . . . . 10 »
- 7. Այգի . . . . . 10 »
- 8. Ինչ վոր կցանես, այն ել կհնձես . 10 »
- 9. Մարդագետին . . . . . 10 »
- 10. Ոգ և ջուր . . . . . 15 »
- 11. Բամբակ . . . . . 10 »
- 12. Տորֆ, քարածուխ և նավթ . . . . . 10 »
- 13. Կովի կերը և խնամքը . . . . . 15 »
- 15. Ընտանի թռչունների խնամքը . . . 20 »
- 16. Մեղու . . . . . 15 »
- 19. Ինչպես կազմել հերբարիում . . . 10 »
- 20. Հանքեր . . . . . 15 »
- 21. Շերամ . . . . . 10 »
- 22. Անտառ . . . . . 15 »

ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

- 14. Կաթնամթերքներ . . . . .
- 18. Ակվարիում և տերրարիում . . . . .